# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար**

<table>
<tr><th>N</th><th>Համայնքային ծառայության թափուր պաշտոնների անվանումները</th><th>ծածկագիր</th><th>Նշված թափուր պաշտոնների անձնագրերով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը</th><th>Նշված թափուր պաշտոնների անձնագրերով այդ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները</th><th>Պահանջվող փաստաթղթերը</th></tr>
<tr><td>1</td><td>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի առաջին կարգի մասնագետ</td><td>3.2-39</td><td rowspan="5">Բաժնի առաջին կարգի մասնագետը՝<br><br>ա) բաժնի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.<br>բ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար.<br>գ) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.<br>գ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.<br>դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.<br>ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.<br>զ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.<br>է) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխանները.<br>ը) իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություն<br>ներ:<br>Բաժնի առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:</td><td rowspan="5">Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խումբ<br>ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.<br>բ) տիրապետում է ՀՀ Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներին, ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.<br>գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.<br>դ) ունի համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.</td><td rowspan="5">Մրցույթին մասնակցել ցանկացող՝ հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝<br>ա) գրավոր դիմում/ ձևը լրացվում է տեղում/.<br>բ) կրթությունը հավաստող փաստաթղթի/ դիպլոմի և աշխատանքային գրքույկի պատճենները/.<br>գ) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականների պատճենները կամ համապատասխան տեղեկանք.<br>դ)հայտարարություններ՝ /լրացվում են տեղում/<br>ե) 1 լուսանկար՝ 3x4 սմ. չափսի<br>զ) անձնագրի պատճենը.<br>Փաստաթղթերը ներկայացնել անձամբ</td></tr>
<tr><td>2</td><td>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ</td><td>3.2-31</td></tr>
<tr><td>3</td><td>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի առաջին կարգի մասնագետ</td><td>3.2-52</td></tr>
<tr><td>4</td><td>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ</td><td>3.2-40</td></tr>
<tr><td>5</td><td>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժնի առաջին կարգի մասնագետ</td><td>3.2-33</td></tr>
<tr><td colspan="3">Մրցույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը</td><td colspan="2">Փաստաթղթերի ընդունումը</td><td>Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը</td></tr>
<tr><td colspan="3">օրը՝ 2015 թվականի մայիսի 14-ին ժամը՝ 11:00<br>վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1</td><td colspan="2">Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, պաշտոնի անձնագրերը և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու քաղաքապետարան՝ (1-ին հարկ. հեռ 0312-2-22-18),<br>ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից</td><td>2015 թվականի ապրիլի 28-ը ներառյալ</td></tr>
</table>